

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հուլիսի 6-ին, կիրակի.—Վարդավառ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, հանդիսավոր ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Շվեդիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Արսեն եպս. Բերբերյանը և «Հայր մեր»-ից առաջ ոգեշունչ քարոզ խոսեց՝ «Դա է Որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ, դմա լուարուք» (Մատթ. ԺԷ 5) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. պատարագին ներկա էին նաև Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչներ Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը, Տ. Արամ եպս. Քեշիշյանը և տիար Ոսկեբերան Արզումանյանը:

* * *

Հուլիսի 7-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել քհն. Կյուրեղյանը:

«Զկնի սրբոյ պատարագի կատարի Հոգեհանգիստ վասն համօրէն ննջեցելոց»:

* * *

Հուլիսի 13-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Եղրաս աբեղա Ներսիսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Սրբեա Տէր զմեղուցեալ քո ծառայիցն զգայարան և շնորհեա տեսանել զքեզ և լսել զիայրական ձայնն. եթէ դա է Որդին իմ սիրելի» (Շարական) բնաբանով (տես էջ 27):

* * *

Հուլիսի 20-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Զատիկ աբեղա Ավետիքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «...ի ակն բանէ՝ արու և էգ արար զնոսա, եւ ասէ. Վասն այսորիկ թողցէ այր զիայր եւ զմայր՝ եւ երթիցէ զիետ կնոջ իւրոյ, եւ եղիցին երկոքեան ի մարմին մի... զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեսցէ» (Մատթ. ԺԹ 4—7) բնաբանով (տես էջ 25):

Ս. պատարագին ներկա էին Մայր Հայրենիք և Մայր Աթոռ ուխտի եկած ֆրանսահայ ուսանողներ:

*
* *

Հուլիսի 26-ին, շաբաթ.— Այսօր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ամառային հանգստի մեկնեց Կիսլովոդսկի «Կրասնի կամեն» առողջարան:

*
* *

Հուլիսի 27-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս .սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Հայկազուն վարդապետ Նաջարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Եթէ մոռացայց զքեզ, Երուսաղէմ, մոռասցի զիս աջ իմ: Կցեսցի լեզու իմ ի քիմս իմ՝ թէ ոչ յիշեցից զքեզ» (Սղմ. ՃԼԶ 5) բնաբանով (տես էջ 23):

*
* *

Օգոստոսի 3-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Պսակ աբեղա Կարապետյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Խոնարհեցար ի բարձանց վասն մեզոյ փրկութեան, արձակիչ կապելոց և բժիշկ հոգւոց մերոց» (Շարական) բնաբանով:

*
* *

Օգոստոսի 10-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մաշտոց աբեղա Խաչիկյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ես եմ լոյս աշխարհի. որ գայ զկնի իմ՝ ընդ խաւար մի գնասցէ, այլ ընկալցի զլոյսն կենաց» (Հովհ. Ը 12) բնաբանով:

*
* *

Օգոստոսի 17-ին, կիրակի.— Վերափոխումն Ս. Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլատյանը և «Հայր մեր»-ից առաջ ոգեշունչ քարոզ խոսեց՝ «Դու հողեղեն սրովբէ ես, հարսն ի յերկրէ յերկինս ես, մեղաւորաց քաւիչ ես, Աստուածածին մեղայ քեզ» (Շարական) բնաբանով:

«Զկնի սրբոյ պատարագի կատարի Օրհնութիւն խաղողոյ»:

*
* *

Օգոստոսի 18-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել քհն. Կյուրեղյանը:

«Զկնի սրբոյ պատարագի կատարի Հոգեհանգիստ վասն հանօրէն ննջեցելոց»:

*
* *

Օգոստոսի 19-ին, երեքշաբթի.— Այսօր Մայր Աթոռ վերադարձավ Վեհափառ Հայրապետը Կիսլովոդսկի «Կրասնի կամեն» առողջարանից:

Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին Մայր Աթոռի միաբանները՝ գլխավորությամբ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանի:

*
* *

Օգոստոսի 24-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Զավեն աբեղա Խաչատրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Օրհնեալ ես դու ի կանայս, եւ օրհնեալ է պտուղ որովայնի քո» (Ղուկ. Ա 42) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Օգոստոսի 31-ին, կիրակի.—Տօն գիւտի գօտւոյ Սրբուհւոյ Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Պարգև աբեղա Մարտիրոսյանը:

«Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: